

ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ԵՐԿԱԹԱԳԻՐ

ՓՂԱՍԿԻՆԵԱՅ ԿԸԶՄՈՎ ԱՒԵՏԱՐԱՆԸ:

4. Պօլսում հրատարակուող «Փունջ» լրագրի թիւ 1829 Նոյեմբերի 1 կարգումներ Մայր Աթոռոյ Թանգարանի իրեզինաց ցուցակը որի մասին թերեւս առիթ ունենանք խօսելու: Այդ ցուցակի մէջ ի միջի այլոց գրուած է և հետեւեալը. «Իսկ ներկայացուած ցուցացակէս դուրս են գրեթէ 1300 տարուան փղոսկրեայ կողքով այն դիւզնագիւտ զրշագիր աւետարանը, որուն համար 50,000 մանէթ տուած էր ուսաց հնագէտներէն Ուփարով կոմսը: Անգղիացի հնագէտները թերեւ կրկնապատիկը գնահատեն»:

Նոյն «Փունջ» լրագրի թիւ 1832 Նոյեմբերի 4 կարգումները դարձեալ «Ս. Էջմիածնի Գէորգաշէն Թանգարանի ցուցակին հրատարակութեան առթիւ յիշած էի նաեւ 1300 տարուան հազուագիւտ աւետարանը, Հետաքրքիր բարեկամք իմանալ կուզեն եղեր թէ Էջմիածին որ թուականին և ուստի ձեռք բերած է այս թանկագին ազգային եկեղեցական գանձը»:

«Եիշեալ լազմագարեան նախագիր Աւետարանը մեծադիր հաստ մագաղաթեայ և ամբողջ երկաթագիր է: Հանգուցեալ Պ. Գէորգ Գ. Կաթողիկոսը, կըսեն թէ յատուկ վարդապետ մը զրկելով ի Հին—2 ուղտ, Ասպահանու Ամենափրկչի վանքէն բերել տուած է»:

Թանգարանի ցուցակը և այս տեղեկութիւնը հաղորդողն է յայտնի ուղեւոր խմբագիր Պ. Ա. Յ. Այվազեան, որ տեղեկութիւնները կամ դիտմամբ կամ անգիտութեամբ խեղաթիւրում է:

Նախ քան Աւետարանի մասին հաղորդած սխալ տեղեկութիւնները հերքելը, յիշենք որ Հին Զուղան Հին Նախիջևանի գաւառումն է, Երասխ գետի ձախ ափի վերայ, Ռուսաց սահմանում: Ամենափրկչի վանքը Ասպահանու մօտ եղած Նոր—Զուղայումն է, իսկ Հին և Նոր Զուղաների մէջ ամսօրեայ հեռաւորութեամբ տարածութիւն կայ: Աւետարանը ոչ թէ Ամենափրկչի, այլ Հին Զուղայի մօտ Երասխի աջ ափին Պարսից սահմանադիւում գտնուած Գարաշամբ գիւղի Մաղարթու Ս. Ստնփաննոս Նախափկայի վանքիցն է բերուած և այն՝ Հանգուցեալ Ներսէս Ե. Աթուղիկոսի օրով:

Աւետարանը իբրեւ հազուագիւտ մի հնութիւն հետաքրքրութեան արժանի է, և այդ մասին բանասէր ընթերցող հասարակութեան բաւականութիւն տալու համար հարկ ենք համարում քաղուածօրէն հրատարակել այդ աւետարանի Ս. Էջմիածին փոխադրուելու մանրամասնութիւնը՝ առնելով Սինօղի № 20 գործից, որ սկսուած է 1848 թուի Փետրվարի 16 ին և վերջացած 1853 թուի Յունիսի 10 ին:

Այդ գործից երևում է որ Հանգուցեալ Թովհաննէս եպիսկոպոս Շահ-խաթունեան 1848 թուի Փետրվարի 16 ին յայտարարութեամբ ներկայացնում է Սինոդին Երջանկայիշատակ Հանգուցեալ Ներսէս Ե. Կաթուղիկոսի կոնդակը, որից երևում է որ Շահխաթունեանը Հայրապետի ուշադրութիւնը հրաւիրել է որ զանազան տեղերից և յատկապէս Ս. Ստեփաննոս Նախավկայ վանքից ազգային եկեղեցական հնութիւնները և հազուադիւտ գրչագիր մատենաները Ս. Էջմիածնի գրատունը փոխադրուեն. այդ ինքնաձեռագիր կոնդակը որ գրուած է թիւ 454 ի 1847 և ազգական 1296 Դեկտմբ. 13 ի Թիֆլիս՝ ուղղուած է Թովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի անուան, և է.

« Սրբազան Թովհաննէս եպիսկոպոսի Գէորգեան (Շահխաթունեան) նուիրեմ՝ զողջոյն Քրիստոսական մաղթելով զօգնականութիւն նորա անձին ձերում և մտաց և կամաց,

« Ասան զրեանց յուսացելոց գտանել ի գրատան Նախավկայի վանից ունելով անմոռաց զբան ձեր, այժմ ահա ցանկամ լսել զհաճութիւն ձեր, զի թէ կամք իցեն ձեզ՝ և կարելի համարել լինիցի ի սմին ձմերա-յին եղանակի գնալ ձեզ, խորհրդակցեալ ընդ սրբազան Աուկաս արքեպիսկոպոսին և ընդ այլ ատենականաց՝ ի Սինոդի, և տնօրինեալ զեղանակ վասն գանձապետական գործոց կառավարութեան մինչև ցցնալ ձեր և վերադառնալ, որ զիւրադոյն լինի, որպէս ինձ թուի ձերով փականօք ամրացուցանել զամենայն զգրուես ևնթագրեալս ձերում գանձարանական կառավարութեանց, և զգումար վասն ծախուց յանձնել ուրումն յուսացելոյ՝ նոյնպէս և զստացումն եկամտից, և ի վերադառնալն ձեր ընկալնուլ զհաշիւ և կարգաւորել ըստ առաջնոյն,

« Իսկ եթէ ձեզ չհամարեսցի կարեւոր վասն որոց և իցէ կասկածանաց գնալն, զով ևհարժան համարել լինիցի, նշանակեսցես, ընդ նմին նշանակեսցես և զանուն առաջնորդի վանուցն և զայլ որ ինչ հարկաւոր դիտիցես. զի ըստ այնմ առաքեսցուք զհրամանագիր փոխարքային առ որս հարկաւոր իցէ, Ողջ լիւր և զօրութիւն Տեառն ընդ մարմնոյ ձեր և հոգւոյ:

Հանգուցեալ Թովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան լինելով Սինոդի անդամ, գանձապահ, դարբասչի, ուսումնարանի տեսուչ, տպարանի և մատենադարանի կառավարիչ, զժուարանում է գնալ, ուստի Սինոդը պատշաճ է գատում՝ ուղարկել Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը Սինոդի անդամ Մակար վարդապետին, և ըստ այսմ իւր որոշումը յայտնում է Ներսէս Ե. Կաթուղիկոսին, որ թիւ 136 ի 1848 և ազգային 1297 Ապրիլի 17-ին յանուն Սինոդի իւրագիր կոնդակով տնօրինում է.

« Սինոդի սրբոյ Էջմիածնի ընկալեալ զգրութիւնն ի 21 Մարտի համար 268 յաղագս առաքելոյ ի վանս սրբոյն Ստեփաննոսի որ յայնկոյս Երասխայ ի հանդիպոյ Զուղայի ոչ զԹովհաննէս Սրբազան եպիսկոպոսն Գէորգեան, այլ զՄակար վարդապետն անդամ Սինոդի Էջմիածնի յա-

ղագս որոնելոյ անգանօր ի գրատան յիշեալ վանիցն զձեռագիր գրեանս, և բերելոյ ի Սուրբ Էջմիածին յաղագս վերաքննութեանց հարկաւորացն ի նոցունց վասն ազգական որպիսութեանց անծանօթից՝ ահաւասիկ առաքեմ ընդ այսմ զընդարձակագիր յաղագս ճանապարհորդութեան նորա չորս ամսեայ ժամանակաւ միայն մնալոյ արտաքս սահմանաց. ընդ նմին և զկոնդակ մեր առ Յովհաննէս վարդապետ տէր Գալստեան վանահայրն, վասն հարազատութեամբ բանալոյ նմա զերկոսին դարանսն եղեալս ի վերայ փոքրիկ մատրանցն երկուց արեւմտակողման բաժնի տաճարին, որոց մօտք են ի յատակէ վերնատուն անուանեալ կացարանի աղօթաւորաց. և ոչ թագուցանել ի Մակար վարդապետէն զամենայն ձեռագիրս գտանեցեալս առ վանականսն եղեալս ի նմին վանքի, կամ յայլուր առ հոգեւորականս կամ առ մարմնաւորականս և կամ յանկիւն ուրեք եկեղեցւոյն կամ սենեկաց վանիցն, Եւ զամենայն զգտանեցեալ ձեռագիրսն հաւաքեալ և բոլորք հոգունակութեամբ ամրացուցեալ վասն վնասուց յանձնեաց կամ ջրոցինքն վանահայրն ևս ընդ շնորհունակ Մակար վարդապետին առեալ բերցեն ի Ս. Էջմիածին. ուր հասու եղեալ զինչութեանցն և որպիսութեանցն տնօրինեցուք այնպէս, որ ոչ հնութիւնն գտանեցեալ ի նոսին մնացէ յանյայտութեան և ոչ գրեանքն գտանիցեն իբրեւ անպիտան իմն յանկիւնս դարանացն, յորս գտանին և հաւատարմացուցաք, զի չունի վանքն Սուրբ Ստեփաննոսի զրկիլ ի հարկաւորացն իւրումն միաբանութեան, Կրեցաւ հրաման առ որս հարկէր յաղագս հարկաւորացն վասն ճանապարհորդութեանց Մակար վարդապետի օժանդակութեանց, և մաքսարանական կառավարութեան վասն անարգել բերելոյ յԵթով Էջմիածնի զամենայն գրեանսն, Աս որ խնդրեմ՝ ոչ ևս յամեցուցանել զառաքումն Մակար վարդապետի զի ժամանակն նշանակեալ վասն նորա յաղագս հանդարտ հետազոտութեամբ հաւաքելոյ զամենայն զձեռագրոց պիտանացուն և բերելոյ ընդ ինքեանցս:

Այսպէս, Մակար վարդապետը գնալով Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքը և հետազոտելով տեղւոյն գրանոցի ձեռագրները, նըպատակաւորմարները տեղւոյն վանահօր հետ բերումէ Ս. Էջմիածին և առանձին ցուցակով համար 18 ի 4-ն Յունիսի 1848 ամի յայտարարութեամբ ներկայացնում է Սինօդին:

Ցուցակից երեւումէ որ 41 հատ ձեռագրներ են բերում Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքից. այդ ցուցակի մէջ գրուած է յիշեալ փոխակրեայ կազմով մագաղաթեայ աւետարանի համար —

« 1 Մի հատ երկաթագիր մագաղաթեայ Աւետարան քանդակագործ փղոսկրեայ կողիւք. գրեալ ի Հայոց ՆԼԸ թուականին » :

Ահա այս է այն Աւետարանը, որի մասին խօսում է Պ. Ա. Յ. Այվազեան, Իբրեւ ամբողջութեամբ փղոսկրեայ կողիւք Աւետարանը ոչ թէ Հանգ. Վ. Գէորգ Կաթուղիկոսի օրով Զուգայի Ամենափրկիչ վանքից, պլ

1848 թուին Մայիսի վերջին օրերու մ' Հանգ. Երջանկայիշատակ Ներսէս Ե. Կաթողիկոսի օրով բերուած է Հին—Ջուղայի Հանգէպ եղած Մաղարթու Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքից, ձեռագրները փոխադրելու առաջին միտքը յղացել է Հանգ. Յովհաննէս Եպիսկոպոս Շահաթմուշեան և փոխադրուել է այդ Աւետարանը ուրիշ 41 Հատ գրքերի Հետ Սինօգի անգամ Մակար վարդապետի ձեռքով, Իսկ Մակար վարդապետն է այժմեան Տեղակալը Սինօգի Ատենապետի, Բնաբարբոյ և Նոր Նախիջևանի Արքեքեպիսկոպոսը:

Մի քանի խօսք ևս Աւետարանի մասին. Փղոսկրեայ կողով մագաղաթեայ երկաթագիր աւետարանի ծաւալն է երկայնութեամբ՝ 8 ¹/₂ վերշոկ (բթաչափ), լայնութեամբ՝ 6 ¹/₂ վերշոկ, թանձրութեամբ՝ 2 ¹/₂ վերշոկ. Աւետարանի երկու կողերից ամեն մինը կազմուած է Հինգ կտոր փղոսկրից. վերի և ներքի կտորները հաւասար են երկայնութեամբ գրքի լայնութեան, կենդրոնի կտորը փոքր լայն է, իսկ կենդրոնի աջ և ձախ կտորները երկայնութեամբ՝ հաւասար են կենդրոնի կտորին միայն մի փոքր նեղ են:

Առաջին կողի վերի կտորի վերայ քանդակուած են երկու թեւատարած հրեշտակներ, որոնք յաջմէ և յահեկէ բռնել են պսակաձեւ օղակի մէջ քառաթեւ խաչը. Ներքեի կտորի վերայ քանդակուած է Աստուածամայրը Յիսուս մանուկը գրկին աթոռի վերայ բազմած, Ս. Յովսէփ յետուստ, երեք մոգերը որոնք ներկայացնում են իրանց ընծաները՝ յառաջայ, Ընծայաբեր մոգերին մի հրեշտակ գրեթէ հրումէ զէպի ընծա-յարբերութիւն:

Անդրոնի կտորի վերայ քանդակուած է աթոռի վերայ բազմած Աստուածամայրը՝ Յիսուսը գրկին, մարիամանք ևս յետուստ. Անդրոնի աջ կողմի կտորի վերայ վերև քանդակուած պատկերները եթէ չենք սխալվում՝ ներկայացնում են Յիսուս՝ Պիղատոսի առաջ, նոյն կտորի վարի պատկերները՝ Յովհաննէս պիտառումը:

Անդրոնի ձախ կողմի կտորի վերայ քանդակուած են, վերևը՝ Ս. Կղյսը ընկողմանած Յիսուս մանուկը անբանների մտքում, իսկ ներքևը՝ Յիսուսի փախուստը Եգիպտոս Մարիամու գրկին աւանակի վերայ նստած:

Ազգմի բ. կողի փղոսկրի կտորները նոյն ձևով են յարմարեցրած, այդ կողի վերի կտորի քանդակը նոյն է առաջինի հետ. ներքեի կտորի վերայ քանդակուած է Յիսուսի հանգիստը ուխտանայով մուտքը Երուսաղէմ՝ աւանակի վերայ նստած:

Անդրոնում քանդակուած է աթոռի վերայ բազմած Յիսուս՝ աշրահան հասակով առանց մօրուքի, որ աջ ձեռքով խաչակնքումէ, իսկ ձախով բռնել է մի դիրք. աջ և ձախ կողմերը կան երկու մօրուաւոր մարդոց քանդակներ:

Անդրոնի աջ կողմի կտորի վերևի քանդակը ներկայացնում է Յիսուսի

բժշկելը ջրգողուածին, իսկ ներքեինը՝ ներկայացնումէ Յիսուսի բժշկելը մերկանդամ՝ դիւահարին, Կենդրօնի ձախ կողմի կտորի վերին մասում եղած քանդակը ներկայացնումէ Յիսուս աւազակների հետ խաչը ուսին Գողգոթայ բարձրանալիս, իսկ վարի մասնում՝ եղածը՝ ներկայացնումէ Յիսուս՝ գերգետնացի դիւահարներին բժշկելիս:

Բ. երեսին Յիսուսի պատկերները քանդակուած են ձեռքին խաչ.

Թէ քանդակագործ պատկերները և թէ նկարները չունին արդի պահանջմանը համեմատ նրբութիւն, բայց հնութեամբ՝ անգնահատելի են:

Աւետարանը գրողի և գնողի յիշատակարաններից երևումէ որ գրուել է ոմն Յովհաննէս գրչի ձեռքով Տեառն Ստեփաննոսի անունով Հայոց ՆԼԸ, Հոռոմոց 2ԽԸ և Իսմայէլական բռնակալութեան ՅՀԹ. թուականին, Գնուել է և տրուել յիշատակ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին Հայոց ՈՒԲ. թուականին Աթաբակ Ալտկղի տէրութեան և Գրիգորոյ Հայրութեան ժամանակ Վահրամայ որդի Գուրծիի ձեռքով:

Յ. Վ. Մ.

Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին՝ ձեմարանում կարդացուած ճառը:

ԱՐԺԱՆԵՊԱՏԻՒ Ս. ՀԱՐՔ, ՅԱՐԳՈՒՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
ԵՒ ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐԵՆԵՐ.

Մարդկային բնաւորութեան վերայ դիւցազնի քաջագործութեան ազդեցութիւնը խիստ մեծ է, մանաւանդ այն տեսակ դիւցազների, որոնք Հայրենեաց նահատակ, թշուառի պաշտպան, բնկածի կանգնեցնող մականուն են կրում: Մարդս յափշտակվումէ դոցանով. բուն ցանկութիւն է զգում դոցա դարում՝ ապրած և դոցա փառաց հաղորդ գտնուած լինել: Այս մի ուրիշ կարգ ևս դիւցազների, և դոքա փոխմ դաղափարների դիւցազներն են, որոնք ճշմարտութեան զրօշակը բռնած՝ հաւատոյ ղէնքերով դիմութեն ամբողջ աշխարհների ղէմ, և ամենահզօր մարդիկը խոնարհում են նոցա առաջ: զգում են իրանց մարդկային տկարութիւնը, համոզվում են վերջապէս թէ՛ այդ տկար արարածների մէջ կայ մի գերբնական ոյժ՝ որ զօրաւոր է ամեն երկրաւոր ուժից, որ նախանձելի է բոլոր երկրաւոր փառքերից: Աւերին այդ դիւցազները հաւատոյ Առաքեալներն են, որոնց առաջնորդն ինքն իսկ Մեսեայն էր:

Հայաստանեայց Եկեղեցին կատարումէ այսօր երկու Առաքեալ դիւցազների, իւր առաջին Լուսաւորիչների տօնը. և մենք ևս իբրեւ Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներ՝ այս հանդիսովը պատուումենք